Մշտադիտարկման արդյունքների
ամփոփիչ զեկույց

Բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին մատուցվող ծառայությունների արդյունավետության, մատչելիության և որակի մշտադիտարկում

WiP 2.0
Women in Politics
Public Administration
and Civil Society

2024

«Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԵՋեն հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

Զեկույցը պատրաստվել է Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը: Զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՕքսԵՋեն հիմնադրամի տեսակետները:

Հետազոտությունն իրականացվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի կողմից:

Հեղինակ՝ Ռոզա Ավագյան

Մենթոր՝ Անի Կոջոյան

2024

Մշտադիտարկման զեկույցի ամբողջական անվանում	«Բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին մատուցվող ծառայությունների արդյունավետության, մատչելիության և որակի մշտադիտարկման զեկույց»
Մշտադիտարկման ժամանակահատված	Հունիս, 2024 թ. – դեկտեմբեր, 2024 թ.
Մշտադիտարկումն իրականացնող թիմ և կազմակերպություններ	«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ Մշտադիտարկող և զեկույցի հեղինակ՝ Ռոզա Ավագյան Ֆոկուս խմբային քննարկումների հարցազրուցավար՝ Մարինե Ավետիսյան Գործընկեր կազմակերպություն՝ ՕքսԵՋեն հիմնադրամ
Մենթոր	**Անի Կոջոյան**, *կանանց իրավունքների և գենդերային ուսումնասիրությունների փորձագետ և հետազոտող, ռազմավարական հաղորդակցության մասնագետ*

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՍՀՆ	**Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**
ԵԽ	**Եվրոպայի խորհուրդ**
ԵՄ	**Եվրոպական միություն**

ՀԿ	**Հասարակական կազմակերպություն**
ՀԺԼ	**Հայկական ժեստերի լեզու**
ՄԱԿ	**Միավորված ազգերի կազմակերպություն**
ՖԽՔ	**Ֆոկուս խմբային քննարկում**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ - 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ - 5

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Համատեքստ

1.2 Ծրագրի նկարագրություն

II. ՆՊԱՏԱԿ, ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ

2.1 Մշտադիտարկման նպատակ

2.2 Խնդիրներ (գործողություններ)

2.3 Ծրագրի շրջանակ

III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՀԱՐՑԵՐ

3.1 Չափանիշներ

3.2 Չափանիշները վերլուծող հարցեր

IV. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԹԻՄԻ ԵՎ ՄԵՆԹՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1 Մշտադիտարկումն իրականացնող թիմ

4.2 Ծրագրի մենթոր

4.3 Ծրագրի իրականացումն ապահովող կողմեր

V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

5.1 Տվյալների աղբյուրներ

5.2 Տվյալների հավաքագրման մեթոդներ

5.3 Մասնակիցների ընտրություն

5.4 Մշտադիտարկման սահմանափակումներ և մարտահրավերներ

VI. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

VII. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

VIII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ - 16

IX. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ – 19

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

XI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ - 27

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Համատեքստ

Սույն զեկույցը ուղղված է հաշմանդամություն ունեցող կանանց համար ընտանեկան բռնության կանխարգելման պետական ծրագրերի արդյունավետության, մատչելիության և որակի մշտադիտարկմանը: Զեկույցը հիմնված է գրավոր հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների և պետական կառույցների ներկայացուցիչների հետ հարցազրույցների տվյալների վերլուծության հիման վրա՝ անդրադառնալով ծրագրերի ընթացիկ մարտահրավերներին և բարելավման հնարավորություններին:
Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի դեկտեմբերից ընդունվել է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքը, որն ուղղված է ընտանեկան բռնության կանխարգելմանը, բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը և աջակցությանը, ինչպես նաև նման դեպքերի կրկնությունից խուսափելու համար համապատասխան պայմաններ ստեղծելուն: Օրենքը ներառում է մեխանիզմներ, որոնք կոչված են ապահովելու բռնության ենթարկված անձանց իրավունքների և անվտանգությանը նպաստող միջավայր:

2024 թվականի հուլիսի 1-ից նոր փոփոխություններով է ուժի մեջ մտել **օրենքը:**

Օրենքի հիմնական դրույթներն են՝

1. **Կանխարգելում.**
   Օրենքը նախատեսում է հանրային իրազեկման արշավներ, կրթական ծրագրեր և քաղաքականություններ, որոնք ուղղված են ընտանեկան բռնության պատճառների նվազեցմանը:

2. **Պաշտպանություն.**
   Օրենքը սահմանում է ժամանակավոր պաշտպանական միջոցներ (օրինակ՝ բռնարարի տնից հեռացում, բռնության ենթարկված անձի բնակարանի անվտանգությունը ապահովելու համար) և պետական աջակցություն, որը ներառում է բժշկական, իրավաբանական և սոցիալ-հոգեբանական օգնություն:
3. **Կառավարման և համագործակցության մեխանիզմներ**.
   Ստեղծվել են կառույցներ և պատասխանատու մարմիններ, որոնք համակարգում են համապատասխան ծառայությունները և աշխատանքները՝ աջակցելու բռնության ենթարկված անձանց:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կառուցակարգը հիմնված է վերոնշյալ օրենքով, և 2020 թվականից ՀՀ պետական բյուջեի միջոցներով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իրականացնում է երեք ծրագիր.

1. **Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ**. կենտրոնները գործում են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում, տրամադրում են առաջնային օժանդակություն, այդ թվում՝ հոգեբանական, սոցիալական, իրավաբանական/փաստաբանական և օրենքով նախատեսված այլ ծառայություններ: Յուրաքանչյուր մարզում գործող աջակցման կենտրոններն ունեն նաև «Թեժ գիծ» ծառայություն:

2. **Ապաստարանների ծառայություններ**. ապահովում են անվտանգության, սննդի, հիգիենիկ պարագաների, երեխաների դասապատրաստման և սոցիալ-հոգեբանական աջակցություն: ՀՀ-ում գործում են 2 ապաստարան:

3. **Միանվագ դրամական փոխհատուցում**. ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրվում է ֆինանսական աջակցություն մինչև 150.000 ՀՀ դրամ, որն ուղղվում է կենսապահովման, բուժման կամ կացարանի վարձի փոխհատուցմանը:

Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանությունը և նրանց նկատմամբ բռնության կանխարգելումը սոցիալական ապահովության ոլորտի ռազմավարական առաջնահերթություններից պետք է դառնան: Այս խումբը հաճախ հանդիպում է հատուկ դժվարությունների, որոնք նրանց դարձնում են առավել խոցելի ինչպես ընտանեկան, այնպես էլ այլ տեսակի բռնությունների նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող կանանց խոցելիությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝

- **Ֆիզիկական կախվածությունը բռնարարից**, ինչը սահմանափակում է ինքնուրույնության հնարավորությունը:

- **Տեղեկատվության և աջակցության հասանելիության խոչընդոտները**, ինչն էապես դժվարացնում է օգնություն փնտրելու գործընթացը:

- **Բռնության կանխարգելման ծառայությունների ոչ բավարար ներառականությունը**, որոնք հաճախ չեն հաշվի առնում հաշմանդամություն ունեցող կանանց առանձնահատկությունները:

Այս իրավիճակը հատկապես ծանր է հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար, ովքեր կախված են ընտանիքի անդամներից: Երբ բռնարարն այդ նույն ընտանիքի անդամն է, իրավիճակը դառնում է կրկնակի բարդ. սոցիալական կախվածությունը նվազեցնում է աջակցման կենտրոն դիմելու և ապահով միջավայր տեղափոխվելու հնարավորությունը:

Այս խնդիրները պահանջում են համալիր և համակարգված մոտեցում, որը միտված կլինի ծառայությունների մատչելիության և ներառականության բարձրացմանը: Պետական ծրագրերը և աջակցման կենտրոնները պետք է գործեն հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հատուկ կարիքներին համահունչ՝ ապահովելով նրանց անվտանգությունն ու աջակցությունը:

Այս մշտադիտարկման նպատակն է գնահատել, թե որքանով են պետական ծրագրերը, աջակցման կենտրոնների ծառայությունները և ստեղծված մեխանիզմները համապատասխան, մատչելի և արդյունավետ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար: Ուսումնասիրվելու են ինչպես ծրագրերի հասանելիությունը, այնպես էլ դրանց որակը հասկանալու համար, թե ինչպիսի բարեփոխումներ և լրացումներ են անհրաժեշտ տվյալ խմբի իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված գրավոր տեղեկատվության համաձայն՝ «Հայաստանը օրենսդրական բարեփոխումներ է իրականացրել ընտանեկան բռնությունից պաշտպանությունն ու աջակցությունն ուժեղացնելու նպատակով:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կառուցակարգերի հիմքը դրվել է օրենքով, որի հիման վրա ՀՀ պետական բյուջեի միջոցներով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ընտանիքում բռնության ենթարկված անձանց (այս թվում՝ կանայք, տղամարդիկ, երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ և այլ մարգինալացված խմբեր) համար 2020 թվականից ներդրել է աջակցության նոր 3 ծրագրեր.

- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ, որի շրջանակում աջակցության կենտրոններ են ստեղծվել ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Աջակցության կենտրոնները ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրում են առաջնային օժանդակություն, այդ թվում՝ հոգեբանական, սոցիալական, իրավաբանական/փաստաբանական և օրենքով նախատեսված այլ ծառայություններ: Յուրաքանչյուր մարզում գործուղ աջակցման կենտրոնները ունեն նաև «Թեժ գիծ» ծառայություն:
- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ, որի շրջանակում ընտանիքում բռնության ենթարկված անձանց տրամադրվում է ապահով, անվտանգ կացարան, սնունդ, հիգենիկ պարագաներ, երեխաներին դասապատրաստման համար անհրաժեշտ պարագաներ, սոցիալ-հոգեբանական, իրավաբանական/փաստաբանական աջակցություն: ՀՀ-ում գործում են 2 ապաստարաններ:
- Ընտանիքում բռնության ենթարկված անձանց միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում՝ մինչև 150.000 ՀՀ դրամի չափով: Ընտանիքում բռնության ենթարկված անձին ֆինանսական աջակցություն տրամադրվում է հետևյալ նպատակներով՝
  - ✓ կենսապահովման նվազագույն կարիքները հոգալու համար,
  - ✓ բուժումը կամ առողջության վերականգնումը կազմակերպելու նպատակով փոխհատուցման կամ մասնակի փոխհատուցման համար.
  - ✓ ժամանակավոր կացարանով ապահովելու նպատակով բնակելի տարածքի վարձակալության գումարի փոխհատուցման համար:

Վերջին 3 տարներին սույն ծառայությունից օգտվել են հետևյալ թվով անձինք. 2020 թվականին միանվագ դրամական աջակցություն են ստացել 15 անձ, 2021 թվականին՝ 77 անձ, 2022 թվականին՝ 117 անձ, 2023 թվականին՝ 114 անձ: Կարևոր է նշել, որ սույն աջակցության տեսակը սահմանող իրավական ակտն այժմ վերանայման փուլում է՝ նպատակ հետապնդելով նշված աջակցությունն առավել թիրախային և կարիքահեն դարձնելու:

Հարկ է նշել, որ պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապաստարանների առկայությունը և գործունեությունն ապահովելու ուղղությամբ:

Համաձայն 2019 թվականի մարտի 29-ի ն ընդհունված ՀՀ կառավարության N 364-Ն որոշմամբ ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանները ի թիվ այլ պահանջների պետք է լինեն հարմարեցված և ապահովեն մատչելի միջավայր նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար»:

Ըստ ԱՍՀՆ-ից ստացած տվյալների՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ ծրագրի շրջանակում 2024 թվականի

հուլիս ամսվա դրությամբ 32 հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկներ ստանում են համապատասխան աջակցություն, իսկ 6 կանայք և աղջիկներ օգտվում են ապաստարանի ծառայություններից:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց Աջակցության կենտրոնների և Ապաստարանների ծառայությունները մատուցվում են դրամաշնորհային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված որակավորված/հավաստագրված հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:
Պետությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց ազատ, ակտիվ, լիարժեք մասնակցությունը խթանելու նպատակով իրականացնում է նաև **կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրեր՝ նախատեսված հատուկ խոցելի խմբերի համար:** Մասնավորապես, ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունները ներառում են նաև կանանց տնտեսական հզորացմանն ու սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված ծառայության տեսակներ: Տնտեսական հզորացման ծառայությունների մատուցումը ներառում է մասնագիտական հմտությունների ձեռքբերման դասընթացների և գործիքակազմի տրամադրում: Դասընթացի ընտրությունը կատարվում է՝ ըստ շահառուի նախասիրության, գնահատված կարիքի հիման վրա: Ծրագրի նպատակը կանանց վերապատրաստելն է՝ մասնագիտական կարողությունների զարգացման ու անհրաժեշտ աշխատանքային գործիքների տրամադրման միջոցով, ինչը կնպաստի տնտեսական ականխության ձեռքբերմանն ու կայուն զբաղվածության ապահովմանը:

Կարևոր է արձանագրել, որ այս ծառայությունն ստացած անձանց 98 տոկոսը, ծրագրի ավարտից հետո անցնում են աշխատանքի և կարողանում են վաստակել սեփական եկամուտը: Աջակցության այս կոմպոնենտն իրականացվում է ինչպես պետական բյուջեի միջոցների հաշվին, այնպես էլ միջազգային և տեղական գործընկերների հետ համագործակցությամբ:

Իրականացվում են նաև մի շարք իրազեկման արշավներ՝ մարտահրավեր նետելու սոցիալական նորմերին և բարձրացնելու իրազեկվածությունը ընտանեկան բռնության մասին: Այս արշավները նպատակ ունեն փոխելու ընտանեկան բռնության վերաբերյալ վերաբերմունքն ու վարքագիծը, խրախուսել հաղորդումները և խթանել կանանց նկատմամբ բռնության նկատմամբ զրոյական հանդուրժողականության մշակույթը: Կառավարությունը ներդրումներ է կատարել իրավապահ մարմինների պաշտոնյաների, առողջապահության ոլորտի մասնագետների և սոցիալական աշխատողների կարողությունների զարգացման մեջ՝ բարելավելու նրանց արձագանքը ընտանեկան բռնության դեպքերին: Վերապատրաստման ծրագրերն ապահովում են էական հմտություններ և գիտելիքներ՝ արդյունավետ կերպով բացահայտելու, արձագանքելու և աջակցելու ընտանեկան բռնության ենթարկվածներին՝ ապահովելով համակարգված և զոհերի վրա կենտրոնացված մոտեցում: Ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված բաեփոխումների իրականացման ճանապարհին պետությունը համագործակցել է և շարունակում է համագործակցել տարբեր միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Եվրոպայի Խորհրդի, Եվրամիության և այլնի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում: Վերջին հինգ տարիների ընթացքում Հայաստանը նպատակաուղղված գործողություններ է իրականացրել՝ կանխելու խտրականությունը և նպաստելու կանանց և աղջիկների մարգինալացված խմբերի իրավունքներին: Այս ջանքերը կենտրոնացած են գյուղական վայրերում ապրող կանանց և աղջիկների, հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների եզակի մարտահրավերների լուծման վրա: Մասանավորապես, այս առումով թիրախային աշխատանքներ են իրականացրել

Հայաստանի 5 մարզերի 9 քաղաքներում գործող Կանանց ռեսուրս կենտրոնները/ Վիննեթ Հայաստան ցանցը: Կանանց կազմակերպությունների կայացած այս ցանցի գործունեությունն ուղղված է մարզերում և հատկապես գյուղական բնակավարերում կանանց հզորացմանը՝ ստեղծելու միասնական ձայն քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում դրական փոփոխություններ առաջ բերելու նպատակով:

Մարզային մակարդակում գենդերային խտականության կանխարգելմանն ուղղված մեծածավալ աշխատանքներ են իրականացրել Ընտանեկան բռնության աջակցման կենտրոնների կոալիցիան, որն իր մեջ ընդգրկում է յուրաքանչյուր մարզում (Երևանում ևս) գործող մարզային հասարակական կազմակերպություններ, որոնց նպատակն է խթանել համակարգային փոփոխություններ՝ ուղղված ընտանեկան բռնության կանխարգելմանը, բռնության ենթարկվածների անվտանգության ապահովմանը, ինչպես նաև Հայաստանում կանանց հզորացմանը:

Վերջիններիս միջոցով բազմաթիվ ծրագրեր են իրականացվում խոցելի խմբերին պատկանող կանանց, հատկապես բռնության ենթարկված կանանց և աղջիկներին՝ սոցիալ-տնտեսական կարողությունները: Այս առումով Կոալիցիայի անդամ ՀԿ-ները ստանում են նաև դրամաշնորներ պետական բյուջեից՝ մարզերում խոցելի խմբերի կանանց համար տնտեսական հզորացման ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ի լրումն վերոնշյալ տեղեկատվության՝ 2024 թվականի հուլիսի 1-ից նոր փոփոխություններով ուժի մեջ է մտել «**Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:**

Հարկ է նշել, որ մշակվել է Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարության և գործողությունների պլանի նախագիծը:

Ստորև ներկայացնում ենք նաև ը**նտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ մատուցող կառույցների տվյալները.**

Հասցե	**Հասարակական կազմակերպություն**	**Թեժ գծի հեռախոսահամար**
ք. Երևան	«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ	099 88 78 08
Տավուշի մարզ	«Հանուն իրավահավասարության» իրավապաշտպան ՀԿ	094 78 87 70
Արարատի մարզ	«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ	077 80 27 00 098 88 60 77

Արմավիրի մարզ	«Երիտասարդ Ավանգարդ» հանրային շահերի աջակցման ՀԿ	093 57 46 57
Սյունիքի մարզ	«Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ	098 84 84 53
Արագածոտնի մարզ	«Թալին-Հույս» սոցիալական ՀԿ	091 48 20 35
Վայոց ձորի մարզ	«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ	098 88 60 77
Լոռու մարզ	«Ընտանիք առանց բռնության» ՀԿ	098 09 20 94
Կոտայքի մարզ	«Կանանց հզորացման ռեսուրս» ՀԿ	077 38 00 53
Շիրակի մարզ	«Կանանց իրավունքների տուն» ՀԿ	077 570 870
Գեղարքունիքի մարզ	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ	Մարտունու կենտրոն՝ 094 87 65 02 Գավառի կենտրոն՝ 094 87 65 05

Նպատակ և խնդիրներ

Մշտադիտարկման **նպատակն** է ուսումնասիրել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի շրջանակում իրականացվող ընթացիկ ծրագրերի արդյունավետությունն ու առաջընթացը, մասնավորապես՝ ծրագրերում հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավումը, վերհանել առկա խնդիրներն ու մարտահրավերները, գնահատել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար նախատեսված բռնության կանխարգելման պետական ծրագրերի արդյունավետությունը, հաշվի առնելով ծրագրերի նպատակների իրականացման մակարդակը, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների մատչելիությունը և որակը:

Մշտադիտարկման ընթացքում դիտարկվել է, թե որքանով են ներկայիս պետական ծրագրերը համապատասխանում հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների հատուկ կարիքներին, ինչպես նաև չափորոշիչներին, որոնք վերաբերում են ծրագրերի իրականացման պայմաններին ու մատչելիությանը, ներառյալ՝ դիմելու և ծառայություններից օգտվելու հնարավորություններին՝ հաշվի առնելով հաշմանդամության բոլոր խմբերը:

Մշտադիտարկման ընթացքում հատուկ ուշադրություն ենք դարձրել այն հարցերին, թե որքանով են պետական ծրագրերն ու աջակցման մեխանիզմները համապատասխանում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանության միջազգային ու ազգային չափանիշներին: Այն միտված է նաև բացահայտելու այն հիմնական խնդիրներն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են ծառայությունների մատչելիությունն ու արդյունավետությունը՝ առաջարկելով լուծումներ և ռազմավարություններ դրանց վերացման ուղղությամբ:

Մեթոդաբանություն

Մշտադիտարկման գործընթացն իրականացվել է տվյալների հավաքագրման մի քանի մեթոդների միջոցով, որոնք թույլ են տվել գնահատել ծրագրերի և ծառայությունների արդյունավետությունը, մատչելիությունը, որակը և դրանց համապատասխանությունը հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների կարիքներին: Մեթոդները ներառում են ֆոկուս խմբային հանդիպումներ, հարցազրույցներ և գրավոր հարցումներ, որոնք իրականացվել են տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում, այդ թվում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ընտանեկան բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող կազմակերպություններ (աջակցության կենտրոններ) և բռնության ենթարկված և աջակցման ծառայություններից օգտված հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկներ:

1. **Ֆոկուս խմբային հանդիպումներ**

   Ֆոկուս խմբային հանդիպումներ կազմակերպվել են 4 աջակցման կենտրոնների աշխատակիցների հետ: Հանդիպումների նպատակն էր խմբային քննարկումների միջոցով հավաքել տարբեր կարծիքներ և դիտարկումներ՝ կապված բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայությունների մատչելիության և որակի, աջակցության մեխանիզմների մատչելիության ու համապատասխանության, ծրագրերի արդյունավետության, մատչելիության և որակի վերաբերյալ, ինչպես նաև նոր մեթոդների և բարելավումների առաջարկների հավաքագրման համար:

2. **Հարցազրույցներ**

   Հարցազրույցներ են անցկացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցչի և աջակցման ծրագրերի շահառու հանդիսացող հաշմանդամություն ունեցող կանանց հետ: Հարցազրույցները ուղղված էին հետևյալ հարցերին՝

   - պետական ծրագրերի և ծառայությունների արդյունավետություն
   - ծառայությունների հասանելիություն և որակ
   - աջակցման մեխանիզմների համապատասխանություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին
   - ծրագրերի իրականացման գործընթացում առկա դժվարություններ

- բարեփոխումներ

3. **Գրավոր հարցումներ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և հինգ աջակցման կենտրոնների հետ իրականացվել են նաև գրավոր հարցումներ՝ տվյալների հավաքագրում ու որոշակի տեղեկությունների ստանալու նպատակով: Այս հարցումները թույլ են տվել ձևավորել ավելի մանրամասն պատկերացում ծրագրերի իրականացման մասին, ծառայությունների որակի և հասանելիության մասին, ինչպես նաև համակարգի առկա մարտահրավերների վերաբերյալ:

Այս մեթոդաբանությունը հնարավորություն է տվել համապարփակ մշտադիտարկել բռնության կանխարգելման ծրագրերի և աջակցման ծառայությունների արդյունավետությանը, ինչպես նաև բացահայտել հնարավոր խոչընդոտները և բարելավման անհրաժեշտությունները՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հատուկ կարիքները:

Վերլուծված տվյալները ներկայացված են 3 հիմնական չափանիշներով.

- ✓ **Չափանիշ 1**. Իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների **արդյունավետություն**
- ✓ **Չափանիշ 2.** Իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների **մատչելիություն**
- ✓ **Չափանիշ 3.** Իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների **որակ**

Հիմնական արդյունքներ

Չափանիշ 1.

Ծրագրերի արդյունավետություն

ՀՀ աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարությունը 2020 թվականից ներդրել է ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության երեք ծրագիր, որոնք իրականացվում են պետական բյուջեի միջոցներով: Ծրագրերը ներառում են աջակցության կենտրոնների, ապաստարանների ծառայություններ և միանվագ դրամական փոխհատուցում՝ մինչև 150,000 դրամի չափով:

Աջակցության կենտրոնները գործում են ՀՀ բոլոր մարզերում և Երևանում՝ տրամադրելով հոգեբանական, սոցիալական, իրավաբանական աջակցություն և «Թեժ գիծ» ծառայություն: Ապաստարաններում տրամադրվում է անվտանգ կացարան, սնունդ, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական օգնություն: Դրամական աջակցությունը նախատեսված է կենսաապահովման, բուժման, առողջության վերականգնման կամ ժամանակավոր կացարանի վարձակալության համար:

Ըստ նախարարության տրամադրած տվյալների՝ 2024 թվականի դրությամբ աջակցության ծրագրերից օգտվել է 32 հաշմանդամություն ունեցող կին և աղջիկ, իսկ 6-ը օգտվել են

ապաստարանի ծառայություններից: Ծրագրերը խթանում են նաև կանանց տնտեսական հզորացումը՝ առաջարկելով մասնագիտական վերապատրաստման դասընթացներ և գործիքակազմ: Ծառայությունների 98%-ի դեպքում շահառուներն ապահովում են կայուն զբաղվածություն:

Ծառայություններն իրականացնում են դրամաշնորհային մրցույթի միջոցով ընտրված հասարակական կազմակերպությունները՝ պետական բյուջեի և միջազգային գործընկերների աջակցությամբ:

Հարցումներին մասնակցած կառույցները զբաղվում են կանանց իրավունքների պաշտպանությամբ, ընտանեկան և սեռական բռնության կանխարգելմամբ, ինչպես նաև տնտեսական զորեղացմամբ: Նրանց հիմնական ծառայությունները ներառում են իրավաբանական, հոգեբանական և սոցիալական խորհրդատվություններ, ապաստարանի տրամադրում, ֆինանսական աջակցություն, և համագործակցություն ոստիկանության ու այլ կառույցների հետ:

Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների մի մասը հայտնել է, որ ծառայություններ են մատուցել հաշմանդամություն ունեցող շահառուներին, ներառյալ սոցիալական և իրավաբանական աջակցությունը: Մյուս մասնակիցները հիմնականում ուղղորդել են շահառուներին դեպի այլ կազմակերպություններ, որոնք զբաղվում են հաշմանդամության հիմնախնդիրներով: Որոշ կազմակերպություններ չունեն հաշմանդամություն ունեցող շահառուներ: Տեղեկատվության հավաքագրման համար կիրառվում են կարիքների գնահատման հարցաթերթիկներ, որոնք օգնում են պարզել շահառուների կարիքները: Կարիքների գնահատման հարցաշարերում առանձին հաշմանդամության վերաբերյալ հարց չկա, կա առանձնացված առողջական խնդիր (որտեղ էլ նշվում է հաշմանդամության վերաբերյալ ևս) և նշում հոգեկան առողջության կենտրոնում գրանցված լինելու վերաբերյալ:

Շահառուները հաճախ ընդգծում են, որ կարճաժամկետ ծրագրերը բավարար չեն՝ երկարաժամկետ խնդիրների լուծման համար: Հատկապես բաց է մնում շարունակական աջակցության հարցը, որը կարևոր է աշխատանքով ապահովման կամ բնակարանային խնդիրների հաղթահարման համար: Միանվագ ֆինանսական աջակցությունը, ինչպիսին է 150,000 ՀՀ դրամի չափով օգնությունը, հիմնականում անբավարար է՝ շահառուների կենսական կարիքները բավարարելու համար:

Չափանիշ 2.

Ծրագրերի մատչելիություն

Կառույցների մեծ մասն ապահովում է մասնակի մատչելի ծառայություններ, սակայն դրանց հասանելիությունը դեռևս սահմանափակ է, հատկապես ֆիզիկական և լսողության խնդիրներ ունեցող շահառուների համար: Տեսողության և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց աջակցելու որոշակի փորձ արդեն առկա է, սակայն լսողության խնդիրներ ունեցող կանանց համար ծառայությունների մատուցումն առնչվում է լուրջ խոչընդոտների, քանի որ ժեստերի լեզվի թարգմանիչների հասանելիությունը բացակայում է:

Ըստ աջակցման կենտրոններից ստացված տվյալների, կառույցները, չնայած հատուկ պայմանների և մասնագիտացված աշխատակիցների բացակայությանը, ջանում են ապահովել հնարավորինս մատչելի ծառայություններ: Նրանք կազմակերպում են հանդիպումներ ավելի հարմարավետ պայմաններում, օրինակ՝ առաջին հարկում, կամ կապ են հաստատում հեռախոսով՝ փորձելով հաղթահարել ֆիզիկական և տեխնիկական

սահմանափակումները: Այս ջանքերը, թեև գնահատելի, ընդգծում են ավելի համակարգված լուծումների անհրաժեշտությունը, որոնք կբարձրացնեն ծառայությունների որակը և մատչելիությունը բոլոր շահառուների համար:

Իրազեկման աշխատանքները ներառում են հանդիպումներ, այցեր բնակավայրեր և ֆեյսբուքյան էջի միջոցով տեղեկացում, սակայն դրանք ընդհանուր բնույթ են կրում և հատուկ հաշմանդամություն ունեցող անձանց համար չեն ուղղված: Ծառայությունների մատուցման գործընթացում առկա են նաև փոխադարձ հասանելիության և հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու սահմանափակումներ: Առցանց հարթակները նույնպես ընդհանուր բնույթ ունեն, և հատուկ միջոցներ չեն ձեռնարկվել դրանք հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ: Ըստ աջակցման կենտրոններից ստացված տվյալների, եղել են դեպքեր, երբ կապն ապահովել են ընտանիքի անդամները՝ շահառուների փոխարեն: Խնդիր է նաև կենտրոնների մեկ բնակավայրում կենտրոնացումը՝ մարզերում, ինչը շատ շահառուների համար դժվարացնում է տեղում ծառայություններից օգտվելը: Հաճախ ծառայություններն իրականացվում են առցանց կամ հեռախոսազանգի միջոցով:

Չափանիշ 3.

Ծառայությունների որակ

Ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների մի մասը հայտնել է, որ ծառայություններ են մատուցել հաշմանդամություն ունեցող շահառուներին, ներառյալ սոցիալական և իրավաբանական աջակցությունը: Մյուս մասնակիցները հիմնականում ուղղորդել են շահառուներին դեպի այլ կազմակերպություններ, որոնք զբաղվում են հաշմանդամության խնդիրներով: Որոշ կազմակերպություններ չունեն հաշմանդամություն ունեցող շահառուներ: ՖԽՔ-ին մասնակցած կառույցները հիմնականում ծառայություն են մատուցել առողջական (օրինակ շաքարային դիաբետ), հոգեկան առողջության խնդիրներ (անձանցից մեկը կրկին վերջնարդյունքում ուղղորդվել է այլ հաստատություն), ֆիզիկական, տեսողության: Հարցազրույցում քննարկվել են ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության ծրագրերի արդյունավետությունը, մատչելիությունը, որակը և բարեփոխումները, հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների համար:

Ընդհանուր առմամբ, ՖԽՔ-ին մասնակցած կենտրոնները վերջին տարիների ընթացքում սոցիալական և իրավաբանական ծառայություններ են մատուցվել 15 շահառուի: 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում 9 շահառու՝ կանայք և աղջիկներ, ստացել են աջակցություն, իսկ տնտեսական հզորացման ծրագրերում ընդգրկվել են ևս մի քանի շահառուներ՝ ստանալով մասնագիտական դասընթացներ և ֆինանսական աջակցություն: Աջակցման կենտրոնները վարում են բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հաշվառում՝ Google հարթակում տեղադրված Excell ֆայլերի միջոցով: Այս տվյալները եռամսյակային պարբերականությամբ փոխանցվում են Վիճակագրական կոմիտեին, որտեղ դրանք մշակվում են հատուկ ձևաչափով: Չնայած տեղեկատվության մանրամասնությանը, բացակայում են կոնկրետ տվյալներ այն մասին, թե հաշմանդամության որ տեսակն է առավել հաճախ կապված բռնության դեպքերի հետ: Բռնության ենթարկված անձանց վերաբերյալ իրակացրած տարբեր վերլուծություններում և հետազոտություններում ևս չկան առանձնացված տվյալներ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների վերաբերյալ:

Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին մատուցվող կամ նրանց ներգրավվման ծառայությունների որակը ընդհանուր առմամբ միջին է:

Աշխատակիցները հիմնականում հաշմանադամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցելու համար հատուկ վերապատրաստումներ չեն անցնում կամ որոշակի վերապատրաստումների են մասնակցում տարբեր կառույցների կողմից իրականացվող:

Ծառայությունները առավել որակյալ դարձնելու նպատակով ՀՀ ԱՍՀ նախարարությունը հայտնել է, որ իրականացնում է հետևյալ բարեփոխումները.

Հիմք ընդունելով 2024 թվականի հուլիսի 1-ին փոփոխված ընտանեկան բռնության մասին օրենքը, մշակվում են աջակցման կենտրոնների համար նոր չափորոշիչներ, որոնք ներառում են հատուկ պահանջներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված միջավայր ապահովելու վերաբերյալ: Մասնավորապես, հաշվի են առնվում չտեսնող և չլսող անձանց կարիքները: Այս չափորոշիչները, որոնք մշակման փուլում են, կընդունվեն 2025 թվականին: Նոյեմբերի 20-ին նախագծերը ուղարկվել են համապատասխան աշխատակազմին: Մինչ այդ, նշված բոլոր պահանջները ինտեգրված են ծրագրերի բովանդակության մեջ՝ ապահովելով, որ աջակցման կենտրոնները բավարարեն ներառականության և մատչելիության բոլոր չափանիշները:

Նախագծված է նաև 10-78 որոշումը, որը վերաբերում է աջակցման կենտրոնների հավաստագրման կարգին: Համաձայն այս կարգի՝ կենտրոնները պարտավոր են ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները, ներառյալ՝ մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Առանց այս չափորոշիչներին համապատասխանելու, կենտրոնները չեն կարող հավաստագրվել:

2025 թվականին ընդունվելիք կառավարության որոշմամբ հաստատված սոցիալական կարիքների գնահատման հարցաթերթիկում ներառված է հատուկ հարց՝ դիմողի հաշմանդամության վերաբերյալ: Հարցաթերթիկում հաշմանդամության տեսակները բաժանված են չորս կատեգորիաների՝

1. հաշմանդամություն չունի
2. մտավոր հաշմանդամություն
3. ֆիզիկական հաշմանդամություն
4. լսողության և տեսողության խնդիրը միասին (ինչը սխալ է, քանի որ լսողության խնդրի համար մատչելիության ապահովումը այլ, կամ խելամիտ հարմարեցումները այլ չափորոշիչներ են պահանջում, իսկ լսողականը բացարձակապես ուրիշ է, տեսողականը՝ ամբողջապես այլ):

Եզրակացություն

Չափանիշ 1.

Ծրագրերը ընդհանուր առմամբ դրական ազդեցություն են ունեցել շահառուների կյանքի որակի բարելավման վրա, սակայն դրանք չեն բավարարում բոլոր շահառուների կարիքներին: Հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավումը ծրագրերում սահմանափակ է, ինչը պայմանավորված է մատչելիության և իրազեկման պակասով:

Ծրագրերի արդյունավետությունը գնահատվում է բավարար մակարդակով: Հաշմանդամություն ունեցող կանանց համար նախատեսված ծրագրերը հիմնականում սահմանափակ են և չեն բավարարում նրանց կարիքներին ամբողջությամբ: Հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավումը ծրագրերում ունի ավելի փոքր չափաբաժին:

Չնայած աջակցման կենտրոնների աշխատակիցների պատրաստակամությունը և բարեխղճությունը բարձրացնում են ծրագրերի ընդհանուր արդյունավետությունը, այնուամենայնիվ, կարիք կա ավելացնել մատչելիության և որակի ապահովման համար նախատեսված միջոցները, հատկապես մարզերում:

Չափանիշ 2.

Մատչելիության խնդիրները, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար, շարունակում են մնալ հիմնական մարտահրավեր:

Մատչելիության խոչընդոտներ

➢ Ֆիզիկական միջավայրի ոչ բավարար հարմարեցվածությունը դժվարացնում է տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց աջակցություն ստանալու հնարավորությունը:

➢ Տրանսպորտային համակարգի ընդհանուր խնդիրները, որոնք հատկապես ընդգծվում են մարզերում, խոչընդոտում են աջակցման կենտրոնների ծառայությունների հասանելիությունը: Սա չի սահմանափակվում միայն կենտրոնների աշխատանքի շրջանակներում, այլ կապված է տրանսպորտային համակարգի ընդհանուր վիճակի հետ: Հատկապես հաշմանդամություն ունեցող անձինք առավել խոցելի են այս առումով՝ հաճախ կախված լինելով ընտանիքի անդամներից, ինչը ստեղծում է կրկնակի դժվարություններ: Եթե բռնարարն էլ նույն ընտանիքի անդամն է, ապա այդ սոցիալական կախվածությունը շատ ավելի մեծ է դառնում, ինչն էլ ավելի է բարդացնում աջակցման կենտրոն դիմելու և տեղափոխման գործընթացը: Այս հանգամանքը պահանջում է ավելի համակարգային և համալիր մոտեցում՝ ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար:
➢ Լսողության խնդիրներ ունեցող անձանց համար չկան ժեստերի լեզվի թարգմանիչներ:
➢ Առցանց հարթակները նախատեսված են ընդհանուր օգտագործման համար և մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչի հետևանքով նրանց մասնակցությունը սահմանափակվում է:
➢ Իրազեկման աշխատանքները ներառում են հանդիպումներ, այցեր բնակավայրեր և ֆեյսբուքյան էջի միջոցով տեղեկացում, սակայն դրանք ընդհանուր բնույթ են կրում և հատուկ հաշմանդամություն ունեցող անձանց համար չեն ուղղված: Ծառայությունների մատուցման գործընթացում առկա են նաև փոխադարձ հասանելիության և հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու սահմանափակումներ:
➢ ՀՀ տարբեր մարզերում ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկման ակցիաների շրջանակներում, պարզ է դարձել նաև, հաշմանդամություն ունեցող կայնայք և աղջիկները տեղեկացված չեն պետական ծրագրերի և աջակցման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

Ծառայությունների կենտրոնացվածություն

Աջակցման կենտրոնների մեծամասամբ կենտրոնացված են քաղաքային բնակավայրերում: Սա մարզերի տարբեր, հատկապես գյուղական բնակավայրերում բնակվող շահառուների համար ստեղծում է լուրջ ֆիզիկական մատչելիության խնդիրներ, քանի որ հաճախ կենտրոն այցելելն անհնար է տեղաշարժման խոչընդոտների, անմատչելի տրանսպորտի կամ ֆինանսական դժվարությունների պատճառով: Կան մարզեր և համայնքներ, որտեղ չկան նաև հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող մասնագիտացված կառույցներ: Հաշմանդամություն ունեցող անձինք հազվադեպ են հայտնվում հանրության մեջ՝ պայմանավորված տարածված կարծրատիպերով և խտրական վերաբերմունքով: Բացի այդ, առկա են նաև փոխադարձ հասանելիության և իրազեկության պակասի խնդիրներ:

Հատուկ կարիքների բավարարում

Հատուկ կարիքներ ունեցող շահառուների համար կենտրոնները չեն առաջարկում երկարաժամկետ ծրագրեր կամ հատուկ հաստատություններ, որոնք անհրաժեշտ են, օրինակ, հոգեկան առողջության լուրջ խնդիրներ ունեցող անձանց աջակցելու համար: Շատ դեպքերում կենտրոնները կատարում են միայն առաջնային կարիքների գնահատում և ուղղորդում այլ հաստատություններ:

Այս հարցերը պահանջում են համակարգային լուծումներ՝ աջակցման ծառայությունների որակը և մատչելիությունը բարձրացնելու համար:

Չափանիշ 3.

Հաշմանդամության տարբեր խմբերի հետ աշխատելու հմտությունների զարգացումը՝ հատկապես մտավոր զարգացման, հոգեկան առողջության և լսողության խնդիրներ ունեցող անձանց հետ, պահանջում է հատուկ էթիկայի, վերաբերմունքի, մասնագիտական պատրաստվածության և մատչելիության ապահովում: Անհրաժեշտ են վերապատրաստումներ, որոնց կկարողանա մասնակցել աջակցման կենտրոնների ամբողջ աշխատակազմերը՝ թե՛ առցանց, թե՛ առերես ձևաչափերով: Կարևոր է, որ վերապատրաստումները լինեն երկարատև՝ գիտելիքների և հմտությունների խորացման համար:

- Աշխատակիցները հաճախ չունեն հատուկ վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես հոգեկան և լսողության խնդիրներ ունեցող կանանց հետ աշխատանքի համար: Սակայն նրանք աշխատում են առավելագույն ջանք գործադրել շահառուներին օգտակար լինելու համար:

- Ծառայությունները հեռախոսազանգերով կամ առցանց իրականացնելը նվազեցնում է որակը այն դեպքերում, երբ շահառուներին անհրաժեշտ են անհատական հանդիպումներ և ուղղորդումներ:

- Կան դեպքեր, երբ աջակցման կենտրոնները ձեռնարկել են հատուկ գործողություններ՝ ընդունելություն կազմակերպելով առաջին հարկում կամ ուղղորդելով շահառուին այլ կառույցներ, սակայն այս գործողությունները դեռևս բավարար չեն համարվում ներառականություն ապահովելու համար:

Առաջարկություններ

Այս ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ծրագրերը տարբեր լուծումներ են առաջարկում, սակայն դրանք բավարար չեն շահառուների կայուն սոցիալական ներառման համար: Հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար անհրաժեշտ է բարելավել մատչելիությունը, բարձրացնել ծրագրերի արդյունավետությունն ու ծառայությունների որակը: Հաշմանդամության հարցերով զբաղվող կազմակերպությունները պետք է կարողանան տարբերակել ընտանեկան բռնության դեպքերը՝ աջակցման կենտրոններ ճիշտ ուղղորդումներ իրականացնելու նպատակով: Անհրաժեշտ է նաև կարծրատիպերի կոտրման, իրազեկության բարձրացման, ներառական միջոցառումների կազմակերպման և մատչելիության ապահովման աշխատանքներ: Ճշգրիտ կարիքների գնահատման համար պահանջվում է հատուկ ձևաչափ՝ հաշվի առնելով հաշմանդամությամբ պայմանավորված առանձնահատկությունները: Առաջարկվել է նաև հավելյալ միջոցների և ֆինանսներ տրամադրել մատչելիության ապահովման և վերապատրաստումների իրականացման համար:

Բոլոր առաջարկությունները՝ ներառյալ տվյալների հավաքագրումը, իրավական պաշտպանությունը, մշտադիտարկումը, երկարաժամկետ աջակցությունը, իրազեկումը և միջազգային համագործակցությունը, նպաստում են ծրագրերի ընդհանուր արդյունավետության բարելավմանը: Դրանց իրականացումը ապահովում է բազմաշերտ մոտեցում, որն անհրաժեշտ է հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների բազմաբնույթ կարիքներին համապարփակ լուծումներ առաջարկելու համար:

Ոլորտում գործունեություն ծավալող մարմինների, աջակցության կենտրոնների, ապաստարանների թեժ գծերը, շենքային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար պետք է դարձնել լիարժեք մատչելի և ներառական՝ առաջնորդվելով միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորություններով և միջազգային լավագույն փորձով:

Առաջարկություններ՝ ուղղված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը

1. Տվյալների հավաքագրման և օգտագործման բարելավում

1.1. Մշակել կարիքների գնահատման հարցաթերթիկներ, որոնք ներառում են հաշմանդամության տեսակին, խելամիտ հարմարեցումների տրամադրման, մատչելիության խոչընդոտներին առնչվող մանրամասն հարցեր: Նաև շատ կարևոր է, որ բոլոր աջակցման կենտրոնները օգտագործեն միևնույն կարիքների գնահատման հարցաշարը:

1.2. Տվյալների հավաքագրումը կատարել ոչ միայն Վիճակագրական կոմիտեի համար, այլ նաև օգտագործել դրանք ծրագրերի զարգացման և այլ հատուկ ծրագրերի մշակման համար:

2. Երկարաժամկետ աջակցության ծրագրերի ներդրում

2.1. Բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար իրականացվող կարճաժամկետ ֆինանսական աջակցության փոխարեն տրամադրել շարունակական և երկարաժամկետ աջակցություն:

- Ապահովել մասնագիտական ուսուցում և աշխատատեղերի ուղղորդում՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ծրագրերի միջոցով:
- Ներդնել բնակարանային ապահովման կամ բնակարանների երկարաժամկետ վարձակալման ծրագրեր՝ մարզային և սոցիալապես խոցելի խմբերի համար:

3. **Մատչելիության ապահովում**

3.1. Ապաստարանների ֆինանսավորման պայմանագրերում ծրագրի շրջանակներում նախատեսվող ծառայությունների և ռեսուրսների մեջ նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների ապահովմանը՝ ներառյալ մատչելի տարածք/կահույքը, ժեստերի լեզվի թարգմանչի ծառայությունները և անձնական օգնականի տրամադրումը:

3.2. Ներդնել հարմարեցված տրանսպորտային միջոցներ՝ մարզային շահառուների համար:

3.3. Հաստատությունները, ծառայությունները, իրազեկման միջոցառումները ներկայացնող առցանց հարթակները, գովազդները, բրոշյուրները և տեղեկատվական այլ նյութերը տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար մատչելի տարբերակներով՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար բրայլյան գրերով, ձայնային և նկարագրողական տարբերակով, մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար հեշտ ընթեցվող տարբերակով, տեսանյութերը՝ ժեստերի լեզվի թարգամանության և ենթագրերի ուղեկցությամբ:

4. Ծառայությունների տարածում և մատչելիության ապահովում մարզերում

4.1. Ստեղծել/պատվիրակել նոր աջակցման կենտրոններ մարզերում՝ ավելի լայն ծածկույթ ապահովելու համար:

4.2. Ստեղծել շարժական թիմեր, որոնք կայցելեն հեռավոր և սահմանամերձ համայնքներ:

4.3. Ներդնել հատուկ տրանսպորտային ծառայություններ՝ հեռավոր վայրերից շահառուների տեղափոխման համար:

4.4. Ներդնել վստահելի ուղեկցող ծառայություններ՝ ոստիկանության կամ աջակցության այլ հաստատությունների հասնելու համար

5. **Իրավական պաշտպանություն՝**

5.1 Մշակել բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց համար հատուկ իրավական պաշտպանության մեխանիզմների: Նրանց կողմից ոստիկանություն և իրավապահ մարմիններ դիմելու ընթացակարգերի պարզեցում, մատչելիության և հասանելիության ապահովում:

6. **Մշտադիտարկում և հաշվետվողականություն՝**

6.1 Ընտանիքում բռնության դեպքերը հաշվառելու կարգը սահմանելիս դեպքի հաշվառման ձևաթղթում առանձնացնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ իրականացված բռնությունը, արձանագրել հաշմանդամության տեսակը՝ նպաստելու ոլորտում առկա խնդիրների թիրախային լուծմանը:

6.2 Մշտադիտարկել հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքները և հատուկ մշակված մեթոդաբանությամբ կատարել հաշմանդամություն ունեցող անձի բռնության տեսանկյունից խոցելիության չափում: Առավել խոցելի անձանց հաշվառելու բռնությունը կանխարգելման արագ արձագանքմանը նպաստելու համար:

6.3 Ընտանեկան բռնության ոլորտում լիազորություններ ունեցող պետական մարմինների, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության վերապատրաստման դասընթացներում ընդգրկել խտրականության, հասարակության տարբեր խմբերի նկատմամբ տարբերակված մոտեցման հիմքով ընտանիքում բռնության կիրառման վերաբերյալ դասընթացներ՝ ապահովելու համար նրանց կոմպետենտությունը:

7. Մասնագիտական վերապատրաստումներ

7.1 Կազմակերպել դասընթացներ հաշմանդամություն ունեցող անձնանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ոլորտում գործունեություն ծավալող պետական մարմինների աշխատակիցների համար՝ բարձրացնելու համար վերջիններիս իրազեկությունը բռնության տեսակների, բռնության կանխարգելման և բռնությունից տուժած անձանց համար նախատեսված ծառայությունների վերաբերյալ, որպեսզի վերջիններս ուղղորդեն իրենց շահառուներին օգտվել այդ ծառայություններից:

Առաջարկություններ՝ ուղղված աջակցության կենտրոններին և ապաստարաններին

1. Մատչելիության ապահովում

1.1 Վերակառուցել կամ խելամիտ հարմարեցումների միջոցով ձևափոխել ծառայություններ մատուցող աջակցման կենտրենոորը, ապահովելով մուտքերի և տարածքների մատչելիություն ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար:

1. 2 Ապահովել տեխնիկական և հաղորդակցման մատչելիություն: Առցանց հարթակները, իրազեկման արշավները իրականացնել մատչելի եղանակով՝ ապահովելով տարբեր խմբերի հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավումը և հասանելիությունը

- Վեբ հարթակները պատրաստել WCAG (Web Content Accessibility Guidelines) չափանիշներին համապատասխան՝ ապահովելով մատչելիություն տեսողական, լսողության, ֆիզիկական խնդիրներ ունեցող անձանց համար:
- Տրամադրել էկրանային ընթերցողներին համատեղելի գործառույթներ՝ օրինակ՝ տեսողական նյութերի համար տեքստային փոխարինումներ (alt-text) և հստակ նկարագրություններ:

- Հավելել ենթագրեր և ժեստերի լեզվով թարգմանություն վիդեո բովանդակության համար:
- Տրամադրել նյութերը տարբեր ֆորմատներով՝ PDF, ձայնագրություն, տեսանյութ, և բրայլյան տեքստի միջոցով:
- Նախատեսել բարձր կոնտրաստով և կարգավորելի տառաչափերով տարբերակներ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:
- Ներկայացնել բովանդակությունը պարզ և հստակ լեզվով՝ տարբեր կարողություններով և կրթական մակարդակով անձանց համար հասկանալի ձևով:

2. Իրազեկման ծրագրերի ընդլայնում

2.1 Իրականացնել թիրախավորված տեղեկատվական արշավներ տարբեր թիրախային խմբերի համար՝ մատչելիության, իրավունքի և աջակցության ծրագրերի վերաբերյալ:

2.2 Համագործակցել տեղական ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետ՝ հանրային իրազեկության բարձրացման նպատակով:

2.3 Պարբերական հաշվետվությունների կամ անանուն հաջողված պատմություններ հրապարակել հաշմանդամություն ունեցող կանանց համար իրականացված միջոցառումների վերաբերյալ:

3. Ներգրավվածություն

3. 1 Ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունը հարթակների և արշավների մշակման և իրականացման բոլոր փուլերում:

3. 2 Ստեղծել ֆոկուս խմբեր կամ կազմակերպել հարցումներ՝ հասկանալու համար հաշմանդամություն ունեցող կանանց կարիքներն ու առաջարկները:

3. 3 Եթե արշավները ուղեկցվում են ֆիզիկական միջոցառումներով, դրանք իրականացնել մատչելի միջավայրում՝ ֆիզիկական մատչելիության ապահովում, ՀԺԼ թարգմանիչների ներգրավում և ուղեկցողների համար անհրաժեշտ պայմանները:

4. Աշխատակիցների վերապատրաստում

4. 1 Մասնակցել ընտանիքում բռնության, հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի առանձնահատկությունների, նրանց մատչելիության կարիքների, հաղորդակցման էթիկայի, որակյալ ծառայությունների մատուցման և սպասարկման վերաբերյալ իրականացվող դաղնթացներին:

Առաջարկություններ՝ ուղղված հասարակական կազմակերպություններին

Հայաստանում հասարակական կազմակերպությունները, որոնք զբաղվում են կանանց իրավունքներով և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով, կարող են դառնալ կարևոր գործընկերներ՝ ապահովելու օրենքի արդյունավետ կիրառումը: Սա հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող կանանց պահանջները և դրանց հասցեագրման անհրաժեշտությունը:

1.1 Բարձրացնել հանրության իրավագիտակցությունը և իրազեկվածության ընդհանուր մակարդակը, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի, ընտանեկան բռնության և օրենսդրության վերաբերյալ:

2.1 Ընտանեկան բռնությանը վերաբերող քննարկումները և հանրային իրազեկման միջոցառումները կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի համար մատչելի վայրերում և պայմաններով՝ ներգրավելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և հաշմանդամություն ունեցող անձանց:

3.1 Համագործակցել մարդու իրավունքների պաշտպանության, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ՝ իրականացվող քայլերն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, մասնավորապես՝ մշակել ուղեցույցներ և տեղեկատվական նյութեր, կազմակերպել վերապատրաստումներ և դասընթացներ ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների համապատասխան աշխատակիցների, ապաստարանների և աջակցության կենտրոնների աշխատակազմի համար հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի հետ ճիշտ հաղորդակցման և որակյալ սպասարկման վերաբերյալ:

4.1 Կազմակերպել ներառական միջոցառումների՝ կարծրատիպերի հաղթահարման նպատակով:

5.1 Մշակել ուղեցույցներ և վերապատրաստման նյութեր՝ անցկացնելով պարբերական վերապատրաստումներ ոլորտի աշխատակիցների համար:

Առաջարկություններ՝ ուղղված ՁԼՄ-ներին

Հանրային իրազեկում

Մշակել և հրապարակել հաղորդումներ, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների իրավունքներին, բռնության կանխարգելման մեթոդներին:

- Հաղորդումները պատրաստել հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական խորհրդատվությամբ՝ ներառելով ներառական մոտեցումներ:
- Հաղորդումների բովանդակությունը մատուցել մատչելի ձևաչափերով՝ ժեստերի լեզվով թարգմանություններով, ենթագրերով և աուդիո տարբերակներով:
- Ապահովել իրազեկման միջոցառումների, սեմինարների և արշավների լուսաբանում՝ ներառելով հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունը:
- Պատրաստել հոդվածներ և ռեպորտաժներ, որոնք կանդրադառնան՝
  - ✓ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների իրավունքներին,
  - ✓ բռնության հետևանքներին և դրա հաղթահարման օրինակներին,
  - ✓ առաջարկվող աջակցման ծառայություններին, ինչպես նաև օրենքներով պաշտպանությանը:
- Ներկայացնել հաջողված պատմություններ, որոնք ոգեշնչում են և բարձրացնում համայնքի իրազեկությունը՝ հաշմանդամություն ունեցող կանանց հասարակության մեջ դերի կարևորության մասին:

- Տեղեկատվությունը ներկայացնել տարբեր ձևաչափերով, ներառյալ՝ տեսանյութեր, ինֆոգրաֆիկա և սոցիալական մեդիայի համար հարմարեցված բովանդակություն:
- Հաշվի առնել մատչելիության պահանջները՝ լուսաբանումն ապահովելով բարձր կոնտրաստով տեսողական նյութերով, պարզ լեզվով և աուդիո տարբերակներով:

3. Համագործակցություն և ներգրավվածություն

- Ներգրավել հաշմանդամություն ունեցող կանանց շահերի պաշտպանության կազմակերպություններին՝ բովանդակության մշակման և դրա արդիականության ապահովման համար:
- Կազմակերպել քննարկումներ և հարցազրույցներ հաշմանդամություն ունեցող կանանց, իրավապաշտպանների և փորձագետների հետ՝ հասարակության մեջ հստակ ուղերձներ տարածելու նպատակով:

4. Կառուցողական դեր բռնության կանխարգելման գործում

- Բռնության կանխարգելման և դրա հետևանքների հաղթահարման մասին նյութերը ներկայացնել որպես լուծումներ առաջարկող, ոչ թե միայն խնդիրը լուսաբանող միջոց:
- Ընդգծել հասարակական աջակցության կարևորությունը և ներկայացնել այն ձևերը, որոնցով համայնքը կարող է նպաստել բռնության կանխարգելմանը:

Միջազգային կազմակերպություններ (ԵՄ, ՄԱԿ)

1. **Ֆինանսավորում և տեխնիկական աջակցություն**

- Տրամադրել հավելյալ ռեսուրսներ նոր ծրագրերի մեկնարկի համար:
- Միջազգային լավագույն փորձի ներդրում ՀՀ պետական ծրագրերում:

2. **Վերապատրաստում և մշտադիտարկում**

- Մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ:
- Հաշվետվողականության ընդհանուր մեխանիզմների ներդրում և գնահատում:

Հաշմանդամություն ունեցող կանայք և նրանց համայնքներ

1. **Մասնակցություն իրազեկման միջոցառումներին և արշավներին**
Ակտիվորեն ներգրավվել բռնության կանխարգելման և իրավունքների պաշտպանության թեմայով կազմակերպվող դասընթացներին, աշխատաժողովներին և հանրային արշավներին՝ գիտելիքներն ընդլայնելու և իրավունքների պաշտպանության մեխանիզմներին ծանոթանալու համար:

2. **Խնդիրների բացահայտում և հաղորդում**
Վերհանել առկա խնդիրները և դրանք բարձրաձայնել վստահելի հասարակական կազմակերպությունների, պաշտպանողական կառույցների կամ պետական մարմինների միջոցով՝ ապահովելով իրավիճակի համապատասխան արձագանք և լուծում:

3. **Փոխօգնության խթանում և հզորացում**

Իրականացնել աջակցություն և փորձի փոխանակում այլ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հետ՝ կիսվելով հաջողված պատմություններով, ստացած տեղեկատվությամբ և մատչելի ծառայությունների մասին տեղեկություններով՝ խթանելով փոխադարձ հզորացումը և համայնքի ներսում աջակցման մթնոլորտի ձևավորումը:

4. **Մասնակցություն քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործընթացին**

Ներգրավվել պետական ծրագրերի մշակման, վերանայման և իրականացման քննարկումներում՝ ապահովելով, որ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների ձայնը լսելի լինի և հաշվի առնվի:

5. **Տեխնոլոգիական միջոցների կիրառման ուսուցում**
Սովորել և օգտագործել թվային գործիքներ և հարթակներ՝ աջակցման ծառայությունների, խորհրդատվությունների և տեղեկատվության հասանելիությունը հեշտացնելու համար:

6. **Համայնքային խմբերի ստեղծում և մասնակցություն**
Ստեղծել կամ միանալ համայնքային աջակցության խմբերին, որտեղ հնարավոր կլինի կիսվել փորձով, առաջարկություններով և միասին լուծել ընդհանուր խնդիրներ:

7. **Հոգեբանական աջակցություն և ինքնամոտիվացիայի զարգացում**
Մասնակցել հոգեբանական աջակցության ծրագրերին, որոնք նպաստում են վստահության ամրապնդմանը և անհատի ներքին ուժերի զարգացումը:

8. **Տնտեսական հզորացման նախաձեռնություններում ներգրավում**
Օգտվել կանանց տնտեսական հզորացման ծրագրերից, մասնակցել մասնագիտական վերապատրաստումների և զարգացնել ֆինանսական անկախության համար անհրաժեշտ հմտություններ:

9. **Մշտադիտարկման և վերահսկման համակարգի ամրապնդման մասնակցություն**
Կամավոր ներգրավվել ծառայությունների մշտադիտարկման գործընթացներում՝ կիսվելով փորձով և առաջարկելով բարելավման ուղղություններ:

X. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենք՝ https://www.arlis.am/documentview.aspx?docID=194267
- Գրավոր տեղեկատվություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից
- Հարցազրույց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչի հետ
- Հարցազրույցներ բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց հետ
- Գրավոր տեղեկատվությունների ստացում և Ֆոկուս խմբային հանդիպումներ ՀՀ-ում գործող աջակցման կենտրոնների հետ՝

Արագածոտնի մարզ	«Թալին-Հույս» սոցիալական ՀԿ
Արարատի մարզ	«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ
Գեղարքունիքի մարզ	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Լոռու մարզ	«Ընտանիք առանց բռնության» ՀԿ
Կոտայքի մարզ	«Կանանց հզորացման ռեսուրս» ՀԿ
Շիրակի մարզ	«Կանանց իրավունքների տուն» ՀԿ
Վայոց ձորի մարզ	«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ
Տավուշի մարզ	«Հանուն իրավահավասարության» իրավապաշտպան ՀԿ

XI. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՖԽՔ հարցազրույց աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների համար

1. Բռնության կանխարգելման պետական ծրագրերի համապատասխանություն և արդյունավետություն

1. Ինչպե՞ս կգնահատեիք բռնության կանխարգելման ծրագրերն արդյունավետության տեսանկյունից հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար: Ի՞նչն է հատկապես արդյունավետ՝ ըստ Ձեզ:
2. Ինչ կարելի է փոխել, ավելացնել, որպեսզի այդ արդյունավետությունը բարձրանա:
3. Ի՞նչ խոչընդոտներ կան այդ ծրագերն իրականացնելիս, որոնք ազդում են արդյունավետության վրա:
4. Ինչպե՞ս են ծրագրերը ադապտացվում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար, և կա՞ն արդյոք օրինակներ, երբ ծրագրերը փոփոխվել են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան: Արդյո՞ք այդ ծրագրերը համապատասխանում են ՀՈՒ կանանց և աղջիկների կարիքներին:

2. **Ծառայությունների մատչելիություն և հասանելիություն**

1. Ի՞նչ դժվարություններ կամ մարտահրավերներ կան հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար՝ աջակցության ծառայություններից օգտվելու համար (օրինակ՝ ֆիզիկական հասանելիություն, տեղեկատվության մատչելիություն, թարգմանչական ծառայություններ):
2. Ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվում, որպեսզի հաշմանդամություն ունեցող կանայք ավելի հեշտությամբ կարողանան դիմել օգնության, նկատի ունեմ, որ այդ ծառայությունների մատչելիությունն ու հասանելիությունն էլ ավելի բարձրանա:

Տվյալների հավաքագրում

1. Արդյո՞ք հավաքագրվում են զատորոշված տվյալներ՝ կապված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեպքերի հետ: Եթե այո, ապա ինչպե՞ս են այդ տվյալները կառավարվում-կիրառվում ծրագրերի պլանավորման և բարելավման համար:
2. Ունե՞ք տվյալներ, թե հատկապես որ որ տեսակի հաշմանադություն ունեցող կանայք ենք ավելի շատ օգտվում այդ ծառայություններից:

3. Մասնագիտական պատրաստվածություն

- Ի՞նչ վերապատրաստումներ են անցկացնում պետական կառույցների և աջակցման կենտրոնների աշխատակիցները, որպեսզի ավելի արդյունավետորեն աջակցություն տրամադրաեն բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին: Օրինակներ կբերե՞ք:

4. Մարտահրավերներ և բարելավման հնարավորություններ

1. Ի՞նչ հիմնական մարտահրավերներ եք նկատում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելման և աջակցության պետական ծրագրերի իրականացման ընթացքում:
2. Ի՞նչ փոփոխություններ կամ բարելավումներ եք նախատեսում՝ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար նախատեսված ծառայությունների մատչելիությունը ու արդյունավետությունն ավելացնելու նպատակով:
3. Ինչպիսի՞ համագործակցություն եք տեսնում հասարակական կազմակերպությունների կամ այլ կառույցների հետ՝ ծրագրերի արդյունավետության բարձրացման համար:

Հավելված 2

ՖԽՔ հարցաշար աջակցման կենտրոնների աշխատակիցների համար

Նպատակն է պարզել հաշմանդամություն ունեցող կանանց համար **մատչելիության և հասանելիության հետ կապված ծրագրերի արդյունավետությունը, առաջընթացը, ինչպես նաև առկա մարտահրավերներն ու խնդիրները:**

- Արդյո՞ք բոլոր աջակցման ծրագրերը իրականացվում են պետության դրամային աջակցության միջոցով:

1. Ծառայությունների մատչելիություն և հասանելիություն

1. Ծառայություններ մատուցե՞լ եք բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին: Եթե այո, ապա նշեք, թե ինչ ծառայություններ են դրանք:
2. Հաշմանդամության ո՞ր խմբի անձինք են ներառված: (Թվարկել բոլոր խմբերը)
3. Ինչպե՞ս եք գնահատում ձեր կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող կանանց համար: (Ներկայացնել մատչելիության չափանիշները կամ ինչպե՞ս եք դա հասկանում, բացատրեք, խնդրեմ)
4. Ինչպե՞ս են հաշմանդամություն ունեցող կանայք տեղեկացվում ձեր ծրագրերի և ծառայությունների մասին:

2. Մատչելիության ֆիզիկական և տեխնոլոգիական պայմաններ

1. Կենտրոնի շենքային պայմանները բավարարո՞ւմ են հաշմանդամություն ունեցող կանանց՝ առանց դժվարությունների ծառայություններից օգտվելու համար:
2. Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի ծրագրերը լինեն մատչելի լսողական կամ տեսողական հաշմանդամություն ունեցող կանանց համար (օրինակ՝ աջակցող միջոցներ, թարգմանչական ծառայություններ, տեխնոլոգիաների կիրառում և այլն):
3. Ձեր կենտրոնի օնլայն ծառայությունները կամ տեղեկատվական հարթակները արդյո՞ք լիովին հասանելի են հաշմանդամություն ունեցող կանանց համար:

3. Ծրագրերի արդյունավետություն և արդյունքներ

1. Ինչպե՞ս եք իրականացնում հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ զատորոշված տվյալների հավաքագրումը:

4. Վերապատրաստում և պատրաստվածություն

1. Արդյո՞ք աշխատակիցները վերապատրաստվում են հաշմանդամություն ունեցող մարդկանց, հատկապես կանանց և աղջիկների, հետ աշխատանքի համար: Եթե այո, ապա ի՞նչ ձևաչափով: Օրինակներ կարո՞ղ եք բերել:
2. Ի՞նչ հավելյալ վերապատրաստումների կարիք ունեն կենտրոնի աշխատակիցները, որպեսզի ավելի լավ ծառայություններ տրամադրեն հաշմանդամություն ունեցող կանանց:

5. Մարտահրավերներ և խնդիրներ

1. Ինչպիսի՞ խնդիրներ եք հանդիպում հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավման և աջակցման հարցերում:
2. Ի՞նչ մարտահրավերներ կան հաշմանդամություն ունեցող կանանց համար գործող ծրագրերի իրականացման և նրանց լիարժեք մասնակցության ապահովման գործընթացում:

6. Խորհուրդներ և առաջարկություններ

1. Ինչպիսի՞ փոփոխություններ կամ բարելավումներ եք առաջարկում հաշմանդամություն ունեցող կանանց ներառելու և աջակցման ծրագրերը բարելավելու համար և ավելի մատչելի դարձնելու համար:

Հավելված 3

ՖԽՀ կամ հեռախոսազրույցի հարցաշար հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար

1. Ծրագրերի իրազեկվածություն, մասնակցություն և արդյունավետություն

1) Ի՞նչ գիտեք ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեն պայքարին ուղղված պետական ծրագրերի մասին կամ կառույցների, որոնք իրականացնում են նման ծրագրեր:

2) Ինչպե՞ս եք տեղեկացել այդ ծրագրերի մասին:

3) Մասնակցե՞լ եք արդյոք այդ ծրագրերին: Եթե այո, նշեք՝ որ ծրագրին: Ի՞նչ աջակցություն եք ստացել:

4) Ո՞րն է եղել ծրագրի կամ Ձեզ տրամադրած աջակցության ամենաարդյունավետ կողմը: Պատմեք դրա մասին:

2. Ծառայությունների հասանելիություն, մատչելիություն և որակ

1) Ստացած աջակցությունը բավարարե՞լ է Ձեր կարիքները: Օրինակ՝ ի՞նչը:

2) Ի՞նչպիսի վերաբերմունք եք ստացել ծառայությունների մատուցման ժամանակ: Օրինակ, արդյո՞ք այդ ծառայությունները մատուցվել են հաշվի առնելով Ձեր հաշմանդամության խումբը:

3) Ի՞նչ դժվարությունների կամ խոչընդոտների եք հանդիպել՝ այդ ծառայություններից օգտվելու ընթացքում (օրինակ՝ մատչելիություն, հաղորդակցման դժվարություններ):

4) Մասնավորապես,
արդյո՞ք մատչելի էին այն վայրերը, որտեղ մատուցվումեն ծառայությունները՝

հաշմանդամություն ունեցողանձանց համար (ֆիզիկական մուտքինարավորություններ, հա տուկ տեխնոլոգիաներիառկայություն, ՀԺԼ թարգմանիչներ. . .)):

3. Առաջարկներ և բարելավման հնարավորություններ

1) Ի՞նչ կփոխեիք այդ պետական ծրագրերում կամ ծառայություններում, որ դրանք ավելի արդյունավետ, համապատասխան ու մատչելի դառնային:

Հավելված 4

Տեղեկատվության հարցում գործընկեր կառույցներից

Հարգելի գործընկերներ,

ՕքսԵՁեն շահերի պաշտպանության և զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է մշտադիտարկում (մոնիտորինգ)՝ **հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համա**ր նախատեսված բռնության կանխարգելման պետական ծրագրերի արդյունավետության, բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայությունների հասանելիության և որակի, աջակցության մեխանիզմների մատչելիության ու համապատասխանության վերաբերյալ:

Մշտադիտարկման *նպատակն է* ուսումնասիրել ընթացիկ ծրագրերի արդյունավետությունն ու առաջընթացը, վերհանել առկա խնդիրներն ու մարտահրավերները՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելիության և հասանելիության տեսանկյունից:

Հայցում ենք Ձեր աջակցությունը հետևյալ հարցերի առնչությամբ.

Խնդրում ենք մեզ տրամադրել տեղեկություն՝

- Ընտանեկան բռոնության կանխարգելման նպատակով ի՞նչ ծրագրեր եք իրականացնում, արդյո՞ք ծրագրերում ներգրավված են (ներգրավված եղել են) նաև

հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները և ինչպե՞ս եք իրականացնում հաշմանդամության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը:

- Խնդրում ենք ներկայացնել ծրագրերում ներգրաված և շահառու հանդիսացող հաշմանդամություն ունեցող կանանց թիվը և հաջողված պատմությունները, եթե այդպիսին առկա են:
- Նմանատիպ ի՞նչ ծրագրերից եք տեղյակ: